ՅԱՒԵԼՈՒԱԾ Դ

Ի ԹՂԹՈՑ ՎԱՐԴԱՆԱՅ ՅՈՒՆԱՆԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌ ԵՒԴՈԿԻԱՅԻՍ

1626. Մելքիսեթ կաթողիկոս Էջմիածնի եկն ի Լէօպոլիս, կամելով գնալ ի Հռովմ. և տեսեալ զժողովուրդն Թարց հովուի, ձեռնադրեաց նոցա եպիսկոպոս զՆիկողայոս Թորոսովից Լէօպոլսեցի, յամի Տեառն 1626ին, և ի Թուին Հայոց ՌՀԵին։ Եւ մեռաւ ի Գամենից քաղաքի։

Նիկողայոս Թորոսովից, որ ի յամի Տեառն 1626ին, և ի Թուին Հայոց ՌՀԵին ձեռնադրեցեալն էր եպիսկոպոս Լէօպոլսոյ, արար հանդիսապէս աստ զդաւանութիւն կաթողիկէի եկեղեցւոյն Հռոմայ, յամի Տեառն 1630ին, և ի Թուին Հայոց ՌՀԹին, հանդերձ քահանայիւք, որոց աւագերէց էր Տէր Զաքարիայ, թէ և ժողովուրդն ոչ հնազանդեցաւ, և ոչ ընկալաւ զնա ինքեան առաջնորդ՝ զամս յոլովս, և ոչ եմուտ յեկեղեցին, ի հրապուրանաց ոմանց վարդապետաց եկելոց ի Հայաստանէ. այս է, Խաչատրոյ և Գրիգորի Կեսարացւոց, մինչեւ ցՅոհան վարդապետ Արղնցի, այր ոչ միայն հմուտ մակացութեանց իմաստասիրականաց, զոր ես բարւոք ծանեայ ի մանկութենէ, այլ և խոհեմ, հանճարեղ, տնօրէն յառնելիսն, նա միտեցեալ մանաւանդ առ ուղղափառութիւն, առաքեցեալ ի Փիլիպպոսէ կաթողիկոսէ, մինչ էրն ի Կ. պոլիս. որ համոզեալ էած զնոսա ի հնազանդութիւն առաջնորդին, և եմոյծ յեկեղեցին, յամի Տեառն 1651ին, և ի Թուին Հայոց ՌՃին։ — Գնաց ի Հռոմ առ Փապն Ուրբանոս Ը, և մեծաւ պատուասիրութեամբ ի նմանէ ընկալեալ եղեւ. որում և շնորհեաց հանդիսապէս յառաքելականում պալատին զօմօֆորն արքեպիսկոպոսական, մակագրելով զնա կոնտակաւ իւրով՝ արքեպիսկոպոս Լէօպոլսոյ և բոլորի թագաւորութեանն Լեհաց, նա և մեծի դքսութեանն Լիթուանիոյ, ազգին Հայոց։ Եւ այսպէս ճոխաբար յարգեցեալ ի սրբոյ Աթոռոյն առաքելականէ, դարձաւ ի Լէօպոլիս։ Եւ զի էր այր խորագէտ և շրջակնածու, զմտաւ ածէր գտանել զհնար իմն, որով միաբանութիւնն արարեցեալ ընդ սրբոյ եկեղեցւոյն Հռոմայ, մնայցէր հաստատուն առ յապա. եգիտ զկերպ իմն յոյժ դիպուկ, զի լինիցիւր վարժարան մանկանց Արամեանց՝